

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1**

2013 թ. փետրվարի 8-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Գիտխորհրդի 35 անդամներից նիստին մասնակցում էին 26-ը:

Օրակարգ՝

1.<<ՀՀ Գեղարքունիքի մարզի հիդրոմորֆ լանդշաֆտների և հողերի ջրային հաշվեկշիռն ու արդյունավետ օգտագործման ուղիները>> թեմայի համար ՀՀ պետբյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ / ֆինանսավորում ստանալու հայտի քննարկում և ներկայացում:

/ զեկ՝ ԲՆՏ դեկան Ս. Ավագյան /

2.Ընթացիկ հարցեր:

Նիստը ներածական խոսքով բացեց ԳՊՀ ռեկտոր տիկին Ռ.Հակոբյանը: Նա կարևորեց այնպիսի թեմաների և ծրագրերի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնք ֆինանսավորվում են ՀՀ պետբյուջեից: Պետությունը ևս խրախուսում է նման ձեռնարկները, քանի որ դրանք նպաստում են երկրի արագ զարգացմանը, հնարավորություն են տալիս գիտնականներին իրագործելու իրենց մտահղացումները, որոնք միտում ու նպատակ ունեն գործնականորեն լուծելու տարաբնույթ խնդիրներ:

Հարցը ներկայացրեց թեմայի հեղինակներից մեկը՝ ԲՆՏ դեկան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ս. Ավագյանը: Նա մանրամասնորեն ներկայացրեց թեմայի տեսական հիմքերը, գործնական նշանակությունը Գեղարքունիքի մարզի համար, ինչպես նաև արծարծվող հարցերի արդիականությունը: Թեմայի վերաբերյալ իր տեսակետն արտահայտեց համահեղինակ Բ.Մնացականյանը: Ս.Ավագյանը և Բ.Մնացականյանը պատասխանեցին իրենց ուղղված ու թեմային վերաբերող հարցերի: Նիստի ավարտին ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուսուրյանը ներկայացրեց համալսարանի գործունեությանը վերաբերող մի քանի հարցեր:

Որոշեցին՝

1.Երաշխավորել <<ՀՀ Գեղարքունիքի մարզի հիդրոմորֆ լանդշաֆտների և հողերի ջրային հաշվեկշիռն ու արդյունավետ օգտագործման ուղիները>> թեմայի համար ՀՀ պետբյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ / ֆինանսավորում ստանալու հայտը ներկայացնել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

